3 հուլիսի 2014 թվականի N 755 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱ-ԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 20-Ի N 258-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման 2014 թվականի միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 258-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) «1. Հարկերի վճարում» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 9-րդ, 10-րդ, 11-րդ և 12-րդ ենթակետերով.

«	9)	հարկ վճարողների համար դրամարկղային գրքերն էլեկտրոնային եղանակով վարելու հնարավորության ապահովում	դրամարկղային գրքերի վարման ժամկետների կրճատում	ՀՀ ֆինանսների նախարարություն		համապատասխան օրենսդրական և ենթաօրենսդրական փաստաթղթերի ընդունումից 6 ամիս հետո

10)	ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հարկերի վճարման հնարավորության ստեղծման համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների ներգրավմանն ուղղված միջոցառումների իրականացում, ֆինանսական ռեսուրսների առկայության դեպքում՝ ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական կայքում հարկերի վճարման հնարավորության ստեղծում	հարկերի վճարման համար ծախսվող ժամանակի կրճատում և ֆինանսական հոսքերի թափանցիկության ապահովում	ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)		30.12.2014 թ.
11)	բանկերում հաճախորդների համար հաշիվ բացելիս նրանց անունից ֆինանսական գործառնություններ կատարելու իրավատություն ունեցող անձանց ստորագրությունների նմուշների քարտերը ներկայացնելու և վավերացումն էլեկտրոնային եղանակով կատարելու հնարավորության ստեղծում	ստորագրության նմուշների քարտերը հարկային մարմնում հաստատելու ժամանակի կրճատում	ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)	ՀՀ ֆինանսների նախարարություն	30.12.2014 թ.
12)	ՀՀ-ում նոր սերնդի բազմաֆունկցիոնալ ՀԴՄ-ների ներդրում այն ոլորտներում, որտեղ դրանց կիրառումն օրենքով պարտադիր է	ՀԴՄ-ներով արձանագրված հասույթների մասին թղթային եղանակով տեղեկությունները հարկային մարմիններ ներկայացնելու անհրաժեշտության վերացում, դրա հետ կապված ժամանակի կրճատում	ՀՀ ֆինանսների նախարարություն		01.01.2015 թ.

».

2) «4. Շինարարական թույլտվություններ» կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

1)	համապատասխան օրենսդրական փոփոխությունների կատարում՝ ուղղված ներկայումս գործող Հայաստանի Հանրապետության կառավարության 03.03. 2011 թ. N 257- Ն, 29.08.2002 թ. N 1473-Ն, 21.12.1998 թ. N812, 06.05.2010 թ. N 711-Ն, 02.02.2002 թ. N 91, 08.05.2003 թ. N 626-Ն որոշումներով սահմանված դրույթների միավորմանը մեկ որոշման մեջ, որով կօպտիմալացվի կառուցապատման ընթացակարգը, կվերացվեն հնարավոր կրկնությունները, կսահմանվեն անհրաժեշտ թույլտվությունների տրամադրման պայմաններն ու կարգը, մասնավորապես՝ ա. կսահմանվի կառուցապատման ընթացակարգերի առավել պարզեցման հնարավոր-ություն՝ առնվազն II և III կատեգորիաների օբյեկտների համար, բ. կկարգավորվեն ավարտված շինարարու-թյունն ընդունող հանձնա-ժողովի կազմավորման և գործելու հետ կապված խնդիրները (պատասխանատուների և ժամկետների սահմանում), գ. կհստակեցվեն թույլտվությունների տրամադրման ձևաթղթերը, առանձին հավելվածով կներկայացվի էլեկտրոնային թույլտվությունների տրամադրման կարգը	շինարարության թույլտվությունների տրամադրման պարզ և հստակ համակարգի սահմանում, ներկայումս առկա խնդիրների լուծման մեխանիզմների մշակում	ՀՀ քաղաքաշինության նախարարություն		10.09.2014 թ.

».

3) «5. Էլեկտրականության միացում» կետի 1-ին ենթակետի «Կատարման ժամկետը» սյունակում «30.04.2014 թ.» բառերը փոխարինել «31.10.2014 թ.» բառերով.

4) «6. Պայմանագրերի կիրարկում» կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերով.

«

5)	պայմանագրերից ծագող վեճերի լուծման համար անհրաժեշտ գործընթացների և ծախսերի մանրամասն նկարագրությամբ բրոշյուրների տպագրում	պայմանագրերի կիրարկման համար անհրաժեշտ գործընթացների, ժամկետների կրճատում և իրագեկման մակարդակի բարձրացում	ՀՀ արդարադատության նախարարություն	ՀՀ դատական դեպարտամենտ (համաձայնությամբ)	ՀՀ քաղաքացիա-կան դատավարու-թյան նոր օրենսգրքի ընդունումից հետո 6 ամսվա ընթացքում
6)	«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	դատական վեճերի լուծման ժամկետների կրճատում, դատարանին ենթակա որոշ հարցերով որոշումների կայացման հնարավորության փոխանցում նոտարներին, դատավարության փուլերի հստակեցում, կանխատեսե-լիության ավելացում, մասնավոր փորձագետների եզրակացություն-ների կիրառման հստակ հիմքերի ստեղծում	ՀՀ արդարադատության նախարարություն		31.10.2014 թ.
7)	«Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի	նոտարի մոտ «մեկ պատուհան» սկզբունքով ծառայությունների մատուցում, կատարողական մակագրության ներդրում, դատարանին	ՀՀ արդարադատության նախարարություն		31.10.2014 թ.

	նախագիծը ՀՀ կառավարություն ներկայացնելը	ենթակա որոշ հարցերով որոշումների կայացման հնարավորության փոխանցում նոտարներին			

».

5) «ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե» բառերը փոխարինել «ՀՀ ֆինանսների նախարարություն» բառերով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ